

րին գահուն աստիճանները ելլալ, որ երթամ Ռանին աթոռ նստիմ, որ կը սեպէի թէ ալ ինծի կը վայլէ . բայց Ղամարտութիւնը ժպտելով՝ կը խաբուիս ըսաւ, իմաստարիութեան աթոռն է որ կը նստիս : Եւ ըսած ատենը ամէն կողմէ վրաս ծիծաղ մը փրթաւ . և իմ ամօթով շփոթած ատենս () իղջն ալ ելաւ՝ իր ձաղկոցովը անանկ սաստիկ զարկ մը զարկաւ կրօնրկիս՝ որ վար գլորեցայ . աչքս բացի, մէկ մ'ալ տեսնամ որ անկողնիս մէջ եմ եղեր, և ձամբորդութիւնս ալ տեսիլք մըն է եղեր, որ ձեզի պատմեցի՝ որ խեղք սովորք, ինչպէս ես սովորեցայ :

ՍԵՎԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐ ԵՒ ՏԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բ .

Բարձր Հայր . — Եղիցեաց :

ՓՈՒՐ Հայոց սահմաններէն շուտով անցնելով՝ հասայ Վայլ գետին եղերքը Երզնկայի կողմերը, ուր որ Ս'եծ Հայոց բնիկ Հայաստանին սահմանը կը սկսի : Երայեկացոց առաջին անգամ Վարմիր ծովուն մէջ մտնելուն նման սոսկում մը և զարմացք մը հանդերձ ինդութեամբ պաշարեց զիս՝ երբոր այս գետէս անցնելու եղայ, իմ հայրենի յիշատակներս մտածելով . սիրտս մեծամեծ զարնուածքով թունդ կու տար, մտածածս գրեթէ աչքիս առջև մարմնացեալ կը տեսնէի : Ետեւ դառնալով կը տեսնէի նոր Փարաւոն մը և նոր Ս'ովսէս մը, երկուքն ալ առջինէն աւելի զարմանալի և ինծի սիրելի . հոս երկուքն ալ բարեկամաբար գետէն անցան . բայց երբ անդին հասան, այս նոր Փարաւոնս իստացաւ Հայոց Ս'ովսէսին վրայ, տանջեց զանիկայ, ինքն ալ տանջուեցաւ Ս'տուծմէ . ինչուան որ խոնարհելով և հաշտուելով իր հին

բարեկամին հետ, անոր ձեռքով գտաւ իր և իւր ազգին փրկութիւնը, հեթանոսութեան այն կոծեալ ծովէն մտնելով յեկեղեցոյ նաւահանգիստը : — Եւս գետս էր որ ինծմէ 1560 տարի առաջ անցուց իր արծաթափայլ ալեացը վրայ զմեծն Տրդատ և զմեծն Վրիգոր՝ Հայաստանի Եւսաւորիչներն և ազատիչներն . այն անգին աննման զոյգը, որոնց արդիւնքը, փառքը և յիշատակը Երարատու կրկնազրուի բարձր լեռանց մէջ ալ բարձր կեցած են Հայոց ազգին պատմութեան մէջ : 26 տարի էր որ Հայաստան շունչը բռնած կը սպասէր այն քաջագործ հսկայ թագաւորին՝ որ դայ ազատէ զինքն Սասանեանց բռնութենէն . 26 դար էր՝ որ Հայաստան հողին բռնած կը սպասէր այն սրագործ արի հայրապետին՝ որ դայ ազատէ զինքն սատանայի բռնութենէն : Ինչ աննման ինչ երջանիկ օր էր այն օրն, որ Տրդատ և Վրիգոր իրենց մեծագործ մէկմէկէ տարբեր և մէկմէկու անյայտ ընելիքներն սրտերնուն մէջ կարգաւորելով՝ անցան այս տեղերէս և մտան ի Հայաստան : Վարնանային հովուն հրաւերքին պէս համբար հասաւ Վարսից ցրտութենէն ցրուած հայ կտրիճներուն, որոնք իրենց ձմերուցի պէս ամուր տեղուանքը քաշուած կը նստէին . հայրենասիրութեամբ արծարծուած բռնաւորաց զգուշութիւններէն անցան, եկան իրենց բնիկ տէրը, իրենց Երչակունի պսակը դիմաւորելով ընդունելու : Եւսն առիւծասիրտ հսկայակերպ թագաւորը՝ որ միայն պատերազմաց և ասպարիզաց մէջ քաջաց ու գազանաց արիւն կը թափէր, իր հայրենի հողը կոխած ատենը՝ կարծեմ առջի անգամն էր որ հայրենակցաց լաւխաուն խնդումն տեսնելով՝ չի կրցաւ բռնել իր ահաւոր աշուրները կրակէ արցունքներէ : Եւսն օրն այն արցունքներն Հայաստան իր Եփրատայ ու Երասխայ աղբիւրներէն պատուական սեպեց իրեն : Հազար և կէս հազար տարիէն ալ աւելի անցեր էր այս գիպուածին վրայ, սակայն այս օր ես ալ չի կրը-

ցայ իմ արցունքներս չթափել նոյն գեղեցիկ և մեծայիշատակ ափանցը վրայ : Բայց ինչո՞ւ իմ արցունքներուս ալ տրուած չէ այն կենդանացուցիչ զօրութիւնն , ո՞վ Հայաստան : . . .

Հայաստանի արևմտեան սահմաններուն մէջ մտայ հիմայ , իրեն բարձր Հայոց նահանգը : Նոս մեր հին աշխարհքին վրայ տեղեկութիւն չունողներուն համար՝ կ'ուզեմ յիշել համառօտիւ , որ Հայաստան իր տիրապետ թագաւորներուն ատեն 15 պզտի աշխարհք կը բաժնուէր , որ Վահանգ կ'ըսուէին , և հիմակուան () սմանեան քաղաք ըսուած մեծ գաւառներուն կը նմանէին . ամէն մէկն ալ առանձին իր փաշաներն ունէին որ Վախարարք կ'ըսուէին , կամ Բղեաշխ : Բայ 15 նահանգներն կամ նախարարութիւններն բոլորը մէկտեղ 189 գաւառ կը բաժնուէին . գաւառներն ալ աւելի մանր բաժանմամբ՝ վիճակներ կամ կողմեր . որոնց բոլորին թիւը հանդերձ Հայաստանէն դուրս Հայոց տիրած աշխարհքներուն տեղերովն՝ Տրդատայ ատեն 620 պզտի գաւառ կը բաժնուէր . որոնց ամէնն ալ իր առանձին իշխաններն ունէր . թող ուրիշ մանր իշխանութիւններն ալ իւրաքանչիւր գաւառի մէջ : Տրդատէն 100 տարի վերջն ալ Բ Բըշակայ և մեծին Վերսիսի ատեն՝ 400 ազգապետ իշխաններ՝ թագաւորին հետ գահով կը նստէին հանդիսի մէջ :

Բըգ իմ հիմակուան մտած երկիրս այս 15 նահանգաց առաջինն էր կարգաւ , Բարձր Հայք կ'ըսուէր , և ինն գաւառ ունէր , Բարանաղի , Բըիւծ , Սնձուր կամ Սենձուր , Եկեղեաց , Սանանաղի , Վերջան , Սպեր , Շաղազուք և Վարին . այս գաւառաց մէջ՝ Եկեղեացն էր ուր որ նախ մտայ : Արովհետև այս նահանգէս էր սովորական ճամբան Սեծ Հայոցմէ փոքր Հայք մտնելու , կ'երևայ որ անոր համար ասիկայ առաջին նահանգ դասեցաւ . Բարձր անունն ալ կամ իր զրիցը բարձրութեանն համար , ինչպէս կ'ըսէ Խորենացին , որուն մէջ լեռան մ'ալ Վա-

տար երկրի կ'ըսէին . և կամ թէ առջի ժամանակները բոլոր Հայաստան ալ Բարձր Հայք կ'ըսուէր . Հայաստանի արևմտեան կողմը բնակողներն այս անունը իրենց ամենէն մօտ նահանգին վրայ դրին :

Սեր հին Հայաստանն շատ բազմամարդ և բազմաշէն էր . մէջը մեծամեծ քաղաքներ քիչ էին , բայց աւաններ և գեղեր անթիւ անհամար . անշէն երկիր ամենեւին չէր գտուէր : Հին շէնքերուն հազարներով անունները մնացած են արձանագրութեանց և յիշատակութեանց մէջ , բայց խիստ քիչին անուանադրութեանը պատճառն ալ մնացեր է : այսպէս է Եկեղեաց գաւառին ալ , որ անունը երբ և ինչո՞ւ դրուիչն անծանօթ է : Սիայն պէտք չէ կարծել թէ Յունացմէ առած քրիստոնէից Եկեղեցի բառէն ծագած ըլլայ , որովհետև քրիստոնէութեան ծաւալելէն առաջ գտուող աշխարհագիրն Ստրաբոն կը յիշէ այս գաւառս ծեքելով ըստ Յունաց և Երիվիլիսի կոչելով . և մեր մէջ ալ Եկեղեաց կը գտուի ստոյգ և ոչ Եկեղեցեաց , Եկեղք բառէ առնուած , ինչպէս կ'ըրէի : Բայ գաւառս Վնահիտ դիցուհոյն նուիրած ըլլալով՝ Վնահիտական գաւառ ալ կ'ըսուէր քրիստոնէութենէ առաջ . իսկ քրիստոնէութեան ատեն՝ Առսաւորչայ խոստովանութեան տեղն ըլլալով՝ Առսաւորչայ գաւառ ըսուեցաւ , մանաւանդ որ գաւառին մեծ մասն ալ Տրդատ թագաւորն եկեղեցոյ կմ Առսաւորչայ ընծայ ըրաւ . որուն ջանքովը Եկեղեաց՝ իրաւապէս Եկեղեցեաց գաւառ էրաւ շատ եկեղեցիներովն . այն ատենէն թերևս Եկեղեցագաւառ ալ ըսուեցաւ ինչպէս Բուզանդայ պատմութեան մէջ կը կարդամք , թէպէտ ոմանք հոն տեղ ալ Եկեղեաց գաւառ կը կարդան՝ իր եպիսկոպոսան ալ նախաթու եպիսկոպոսաց մէկն էր , թէ Հայոցը և թէ Յունաց , որ Երեզ կամ Երեզկայ քաղաքը կը նստէին :

1 Տես 28 երես սպագրին :